



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 01/19**

09.01.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**)
խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**),

քննարկելով ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշման հավելված N 1-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Մհեր Պետրոսյան) (այսուհետ՝ նաև վարչական դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 23-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշման հավելված N 1-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Վարչական դատարանը գտել է, որ դատարանում քննվող թիվ ՎԴ/11309/05/17 վարչական գործով կիրառման ենթակա վերոնշյալ իրավական նորմը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ վարչական դատարանի դիրքորոշման՝ վիճարկվող նորմը փաստորեն նախատեսում է, որ երեխայի կարգաթիվը որոշելիս նոր ծնված երեխայի հորից սերված երեխաների թիվը հաշվի է առնվում, ի թիվս այլ դեպքերի, եթե դատարանի որոշմամբ նրանց խնամքն անչափահաս տարիքում հանձնվել է նոր ծնված երեխայի հորը:

Մինչդեռ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնալուծության դեպքում երեխաների՝ ծնողներից որևէ մեկի հետ պարելու մասին համաձայնությունը դատարան ներկայացնելը ծնողների իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը:

Այսինքն՝ ըստ վարչական դատարանի, վերոնշյալ իրավական կարգավորումների պայմաններում ստեղծվում է իրավիճակ, երբ նախորդ ամուսնությունից ծնվել են երեխաներ, որոնք ծնողների փոխադարձ համաձայնությամբ բնակվել են հայր ծնողի հետ, վերջինս իրականացրել է նրանց խնամքը, սակայն նոր ամուսնությունում երեխա ունենալու դեպքում հայրը զրկվում է նոր ծնված երեխայի միանվագ նպաստը այն չափով ստանալու իրավունքից, որ չափով վերջինս իրավունք կունենար ստանալու, եթե իրենից սերված և նախորդ ամուսնությունից ծնված երեխաների՝ իր հետ բնակվելու, խնամքի, դաստիարակության հարցում առկա չլիներ մայր ծնողի հետ փոխադարձ համաձայնություն, և հարցը լուծված լիներ դատական կարգով:

Դատարանի կարծիքով՝ նշված նորմով կառավարությունը խտրական մոտեցում է ցուցաբերել մի կողմից այն հայր ծնողների նկատմամբ, որոնց նախորդ ամուսնությունից ծնված երեխաներն անչափահաս տարիքում բնակվել են իրենց հետ, իրենք են իրականացրել այդ երեխաների խնամքը՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա (քանի որ առկա չի եղել ծնողների միջև փոխադարձ համաձայնություն), և մյուս կողմից՝ այն հայր ծնողների նկատմամբ, որոնց նախորդ ամուսնությունից ծնված երեխաներն անչափահաս տարիքում բնակվել են իրենց հետ, իրենք են իրականացրել այդ երեխաների խնամքը՝ երեխաների մոր հետ փոխադարձ համաձայնությամբ (ուստի և բացակայել է դատական կարգով հարցը լուծելու, հետևաբար նաև՝ դատական ակտի անհրաժեշտությունը):

Դատարանը նշում է, որ Կարգի 8-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նոր ծնված երեխայի մորից սերված երեխաները և զավակները՝ բացառությամբ այն դեպքի, երբ անչափահաս տարիքում նրանց խնամքը դատարանի որոշմամբ հանձնվել է այլ անձի, կամ մայրը դատական կարգով զրկվել է ծնողական իրավունքներից:

Սակայն փոխադարձ համաձայնությամբ երեխաներին հոր խնամքին թողնելու դեպքը բացառությունների մեջ նշված չէ, ինչը նշանակում է, որ մայրը, ով փոխադարձ համաձայնությամբ չի իրականացրել նախորդ ամուսնության ընթացքում ծնված երեխաների խնամքը, նոր ամուսնության ընթացքում երեխա ունենալու դեպքում կարող է հավակնել երեխայի ծննդյան միանվագ նպաստի ավելի մեծ չափով գումար ստանալուն, քանի որ նոր ամուսնության ընթացքում նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի են առնվում իրենից սերված և նախորդ ամուսնությունից ծնված երեխաները, նույնիսկ այն դեպքում, երբ այդ երեխաների խնամքին ինքը չի մասնակցել:

Իսկ հայր ծնողը, ով իրականացրել է նաև այդ կնոջից ծնված երեխաների խնամքը, նոր ամուսնության ընթացքում երեխա ունենալու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի ավելի մեծ չափով գումար ստանալուն չի կարող հավակնել, քանի որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու հարցում չի կարող հաշվի առնվել նախորդ կնոջից ծնված երեխաներին, քանի որ, թեև ինքն է իրականացրել այդ երեխաների խնամքը, սակայն բացակայում է դրա վերաբերյալ դատական ակտ, և դատական ակտով երեխաները իրեն չեն հանձնվել:

Ուստի, վարչական դատարանի գնահատմամբ քննարկվող նորմով խտրական վերաբերմունք է դրսևորված նաև հայր և մայր ծնողների միջև՝ ըստ էության վերջիններիս սեռով պայմանավորված: Ընդ որում, վերը նշված տարբերակված մոտեցումը որևէ կերպ պատճառաբանված և արդարացված չէ:

Վարչական դատարանի գնահատմամբ՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստը խրախուսում է ընտանեկան կյանքը և անհրաժեշտ կերպով ազդում դրա կազմակերպման վրա:

Հետևաբար, մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայի հետազոտության հիման վրա վարչական դատարանը գտել է նաև, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստը գտնվում է Կենվենցիայի 8-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում:

Ուստի, թեև կոնվենցիայի 8-րդ հոդվածը չի նախատեսում երեխայի ծննդյան նպաստի վճարման պետության որևէ պոզիտիվ պարտականություն, այնուամենայնիվ, եթե պետությունը որոշում է ստեղծել այդպիսի նպաստի սխեմա, ապա դա պետք է արվի այնպես, որ համատեղելի լինի Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ: Նշված դիրքորոշումը համահունչ է նաև Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշմանը (տե՛ս Կոնստանտին Մարտինն ընդդեմ Ռուսաստանի գործով 22.03.2012թ. վճիռը, գանգատ թիվ 30078/06, պարագրաֆ 130):

Վերոգրյալից ելնելով՝ վարչական դատարանը գտել է, որ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 275-Ն որոշման հավելված N 1-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի պահանջներին:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանում նիստը նշանակված է 2019 թվականի հունվարի 15-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն գործով վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

«8. Նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված (անկախ բնակության (հաշվառման) վայրից)՝

3) նոր ծնված երեխայի հորից սերված երեխաները և զավակները, եթե՝ ... բ) դատարանի որոշմամբ նրանց խնամքն անչափահաս փարիքում հանձնվել է նոր ծնված երեխայի հորը...»:

Հարկ է նշել, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքի հետ կապված հարցերը կարգավորված են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով, որի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«5. Նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու կարգը, նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու համար մյուս երեխաներին և զավակներին հաշվի առնելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

ՀՀ կառավարության 06.03.2014թ. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշմամբ սահմանվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի՝ հետևյալ կերպ.

«1) երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի՝

ա. առաջին երեխայի ծնվելու դեպքում՝ հիսուն հազար դրամ,

բ. երկրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ հարյուր հիսուն հազար դրամ,

գ. երրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ,

դ. չորրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ,

ե. հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ...»:

ՀՀ կառավարության 18.11.2016թ. թիվ 1178-Ն որոշմամբ հաստատված՝ որոշման թիվ 1 հավելվածը հանդիսացող՝ Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու և վճարելու կարգի (այսուհետ՝ Կարգ) 8-րդ կետը սահմանում է.

«8. Նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված (անկախ բնակության (հաշվառման) վայրից)՝

1) նոր ծնված երեխայի ծնողներից (հորից և մորից) սերված երեխաները և զավակները (նոր ծնված երեխայի հարազատ քույրերն ու եղբայրները).

2) նոր ծնված երեխայի մորից սերված երեխաները և զավակները՝ բացառությամբ այն դեպքի, երբ անչափահաս փարիքում նրանց խնամքը դատարանի որոշմամբ

հանձնվել է այլ անձի, կամ մայրը դատական կարգով զրկվել է ծնողական իրավունքներից.

3) նոր ծնված երեխայի հորից սերված երեխաները և զավակները, եթե՝

ա. նրանց մայրը մինչև նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացել կամ օրենքով սահմանված կարգով ճանաչվել է մահացած կամ անհայտ բացակայող, կամ դատական կարգով ճանաչվել է անգործունակ,

բ. դատարանի որոշմամբ նրանց խնամքն անչափահաս տարիքում հանձնվել է նոր ծնված երեխայի հորը, կամ՝

գ. այդ երեխաների մայրը զրկվել է ծնողական իրավունքներից, կամ՝

դ. դատական կարգով հաստատված է այն փաստը, որ նրանց մայրը չարամտորեն (միտումնավոր) խուսափել է ծնողական իրավունքները և պարտականությունները կատարելուց (չի կատարել ծնողական իրավունքները և պարտականությունները) և անչափահաս տարիքում այդ երեխաների խնամքը (երեխաների դաստիարակությունը, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը) իրականացրել է նոր ծնված երեխայի հայրը»:

Այսպիսով՝ վերը նշված իրավական դրույթների վերլուծությունից հետևում է, որ **նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ ի թիվս այլ դեպքերի, հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված նոր ծնված երեխայի հորից սերված երեխաները և զավակները, եթե դատարանի որոշմամբ նրանց խնամքն անչափահաս տարիքում հանձնվել է նոր ծնված երեխայի հորը:**

Այլ կերպ ասած՝ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ նրա հորից սերված երեխաները և զավակները հաշվի են առնվում այն դեպքում, եթե վերջիններս անչափահաս տարիքում հանձնվել են հոր խնամքին **բացառապես դատարանի որոշմամբ:**

Հարկ է նկատել սակայն, որ ընտանեկան օրենսդրությունը ծնողների ամուսնալուծության դեպքում երեխայի խնամքի ու դաստիարակության հետ կապված հարցերի լուծման համար, բացի դատական կարգից, նախատեսում է նաև ծնողների **փոխադարձ համաձայնությամբ** դրանց կարգավորման հնարավորություն:

Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետք են ապրելու երեխաները, երեխաներին և (կամ)

անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին:

Նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: Ծնողները (նրանցից մեկը) փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կարող են առկա տարաձայնությունները լուծելու համար դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին կամ դատարան:

Կարծում ենք, ընտանեկան օրենսդրության վերոնշյալ դրույթների առկայության պայմաններում քննարկվող կարգում սահմանված իրավակարգավորումը համահունչ չէ խնդրի համակարգային կարգավորման տրամաբանության հետ և առաջին հերթին հակասում է իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Միաժամանակ, վիճարկվող դրույթը խնդիրներ է հարուցում խտրականության արգելքի սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներ համաձայն՝

Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Նշված սահմանադրական նորմերն ամրագրում են օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքը, որը նշանակում է՝ «միևնույն կատեգորիայի» անձանց նկատմամբ տարբերությունների բացառում և «հավասար պայմանների առկայության դեպքում մարդկանց հավասար վիճակ»:¹

¹ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 174-175, տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի 29.01.2008թ. թիվ 731 որոշումը:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է համարվում 14-րդ հոդվածի նպատակների համար, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այն է՝ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ եթե կիրառվող միջոցների եւ հետապնդվող նպատակի միջև չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն (Սահինն ընդդեմ Գերմանիայի (Sahin v. Germany), 2003թ. հուլիսի 08-ի վճիռը):

ՀՀ սահմանադրական դատարանը ևս իր 04.05.2010թ. թիվ ՍԴՈ-881 որոշմամբ խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարել օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցումը:

Կարծում ենք, որ վերոնշյալ իրավակարգավորումների պայմաններում վիճարկվող դրույթը հակասում է խտրականության արգելքի սկզբունքին այնքանով, որքանով երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք նախատեսելու հարցում նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս նույն հորից սերված երեխայի խնամքն ու դաստիարակությունը **փոխադարձ համաձայնությամբ** ստանձնած հայր ծնողներին տարբերակել է երեխայի խնամքն ու դաստիարակությունը **դատական կարգով** ստանձնած հայր ծնողներից այն դեպքում, երբ օրենսդրորեն երեխայի խնամքի ու դաստիարակության ստանձման երկու եղանակներն էլ նախատեսված են: Ընդ որում, այդպիսի տարբերակումը որևէ կերպ հիմնավորված չէ, սահմանված չէ այդպիսի տարբերակման հետապնդած նպատակի բովանդակությունը և իրավաչափությունը, այդ նպատակի և դրան հասնելու միջոցների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցությունը:

Ավելին, ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Սոցիալական պետության հիմնական խնդիրներից է՝ իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որը կապահովի հանրության յուրաքանչյուր անդամի համար բավարար կենսամակարդակ, այդ թվում՝ բոլոր այն դեպքերում, որբ անձն իրենից անկախ պատճառներով անկարող է աշխատել: Այդպիսի սոցիալական քաղաքականությունը ենթադրում է սոցիալական ապահովման արդյունավետ համակարգի կազմակերպում, որն առաջին հերթին կներառի պետության կողմից

իրականացվող համալիր միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիների սոցիալական ապահովմանը և սպասարկմանը՝ կյանքի տարբեր իրավիճակներում, երբ որ քաղաքացիներն անկարող են իրենց աշխատանքով ստանալ եկամուտ կամ վարձատրվել՝ ապահովելով իրենց կենսամակարդակը²:

ՀՀ Սահմանադրությունը, 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետությունը հռչակելով որպես սոցիալական պետություն, 83-րդ հոդվածում ամրագրել և ճանաչել է յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը որպես մարդու հիմնական իրավունքներից մեկը: Ուստի, Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Բացի ՀՀ Սահմանադրությունից, սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է նաև ՀՀ իրավական համակարգի բաղկացուցչ մասը կազմող միջազգային իրավական փաստաթղթերում, ինչպիսիք են՝ օրինակ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիան և այլ փաստաթղթեր, որոնց միանալով Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել ճանաչելու և երաշխավորելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը:

Սոցիալական ապահովության իրավունքին բազմիցս անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 02.04.2014թ. թիվ ՍԴՈ 1142 որոշման 9-րդ կետում սահմանել է. «... **Սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ** է, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող: Առավել լայն հասկացություն է սոցիալական պաշտպանությունը, որը ներառում է ոչ միայն սոցիալական ապահովությունը, այլև սոցիալական ապահովագրությունը և պետության ու հասարակության կողմից իրականացվող սոցիալական օգնությունը»:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ սահմանադրական դրույթի՝ հոդված 37-ի (մինչև 2011թ.ի սահմանադրական փոփոխությունները գործող խմբագրությամբ քննարկվող սահմանադրական նորմն ամրագրված էր Սահմանադրության 37-րդ հոդվածում) հիման վրա սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ 1142 որոշում, կետ 7:

«Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ ձևերի ընտրության խնդիրը: **Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:**

Վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից էական է, թե ինչպես են վերոնշյալ հանգամանքները հաշվի առնվել մեր երկրում կենսաթոշակային բարեփոխումների գործընթացում»:

Վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ քննարկվող օրենսդրական դրույթների սահմանման միջոցով երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքի նախատեսումն ուղղված է ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածով նախատեսված՝ բազմազավակության հիմքով անձի սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման և ապահովման պետության պոզիտիվ պարտականության իրականացմանը:

Ուստի, քննարկվող իրավակարգավորումների անհամապատասխանությունը իրավական որոշակիության և խտրականության արգելքի սկզբունքների պահանջներին հանգեցնում է նաև անձի սոցիալական ապահովության հիմնական իրավունքի խախտմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշման հավելված N 1-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան